

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Նկարում Գ տառով նշված է.

- 1) գրանիտային շերտը
- 2) միջնապատյանը
- 3) նստվածքային շերտը
- 4) բազալտային շերտը



2 Որքա՞ն է հարավարևմտյան կողմի ազիմուտը.

- 1) 45°
- 2) 270°
- 3) 135°
- 4) 225°

3 Արշավախումբը հս. լ. 6° , արմ. ե. 66° կոորդինատից շարժվեց հարավ՝ օրական անցնելով 33,3 կմ ճանապարհ: Արշավախմբի գտնվելու վայրի աշխարհագրական կոորդինատները 45 օր անց կլինեն.

- 1) հս. լ. $4,5^\circ$, արմ. ե. 66°
- 2) հվ. լ. $7,5^\circ$, արմ. ե. 66°
- 3) հս. լ. $19,5^\circ$, արմ. ե. 66°
- 4) հվ. լ. $6,5^\circ$, արմ. ե. 66°

4 Մարտի 21-ին առավելագույն ջերմություն ստանում են.

- 1) հարավային կիսագնդի արևադարձային լայնությունները
- 2) հյուսիսային կիսագնդի արևադարձային լայնությունները
- 3) հասարակածային լայնությունները
- 4) հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնությունները

5 Մթնոլորտի ազդեցությամբ չեն առաջանում.

- 1) տարվա եղանակները
- 2) քամիները
- 3) ծովային հոսանքները
- 4) մթնոլորտային տեղումները

6 Ո՞ր պնդումն է ճիշտ.

Երկրի ներքին ուժերի հետ են կապված.

- 1) երկրաշարժի և տորնադոյի առաջացումը
- 2) երկրաշարժի և ցունամիի առաջացումը
- 3) տորնադոյի և ցիկլոնի առաջացումը
- 4) ցունամիի և ցիկլոնի առաջացումը

7 Մշտապես միևնույն ուղղությամբ փչող քամիներ են.


- 1) արևմտյան քամիները և մուսսոնները
- 2) մուսսոնները և պասսատները
- 3) բրիզները և պասսատները
- 4) պասսատները և արևմտյան քամիները

8 Գետի անկումը 1764 մ է, երկարությունը՝ 196 կմ: Գետի թեքությունը կլինի.

- 1) 0,1 մ/կմ
- 2) 9 մ/կմ
- 3) 12 մ/կմ
- 4) 8 մ/կմ

9 Նկարում Ե տառով նշված է.


- 1) Հարավային բևեռը
- 2) Հասարակածը
- 3) հարավային արևադարձը
- 4) հարավային բևեռային շրջագիծը



10

«Քամիների վարդում» հորիզոնի n° ր կողմից է ամենից շատ փչել քամին.

- 1) հարավարևելյան
- 2) հարավարևմտյան
- 3) հյուսիսարևելյան
- 4) հյուսիսարևմտյան



11

«Հողատիպ – բնական զոնա» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) սևահող – փշատերև անտառ
- 2) պոդզոլային – սավաննա
- 3) դարչնագույն – տունդրա
- 4) անտառային գորշ – լայնատերև անտառ

12

«Օովածոց – օվկիանոս» գույգերից ընտրել սխալը.

- 1) Բոտնիկական – Հյուսիսային սառուցյալ
- 2) Կալիֆոռնիական – Խաղաղ
- 3) Գվինեական – Ատլանտյան
- 4) Օմանի – Հնդկական

13

Ω° ր կլիմայական գոտին է բաժանվում կլիմայական երեք մարզի՝ արևմտյան (միջերկրածովային), կենտրոնական (ցամաքային), արևելյան (մուսսոնային).

- 1) մերձարկտիկական (մերձանտարկտիկական)
- 2) հասարակածային
- 3) մերձհասարակածային
- 4) մերձարևադարձային

14

Ω° ր պնդումն է ճիշտ.

- 1) Արեգակից ստացվող ջերմության քանակը կախված է վայրի աշխարհագրական լայնությունից և բացարձակ բարձրությունից:
- 2) Բնեռներում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են մեծ անկյան տակ:
- 3) Հասարակածում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են փոքր անկյան տակ:
- 4) Ջերմային բարեխառն գոտիներն ընկած են արևադարձերի միջև:

15

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Եվրասիայի մերձարևադարձային և բարեխառն կլիմայական գոտիների արևելյան ծովափնյա շրջաններում ամռանը օվկիանոսից դեպի ցամաք են փչում խոնավ և տաք մուսսոնները:
- 2) Քամու ուժը կախված է արագությունից:
- 3) Ցերեկային բրիզն առաջանում է ցերեկը ջրավազանի վրայի սառն ու ծանր օդի դեպի ցամաք շարժվելու հետևանքով:
- 4) Հյուսիսային կիսագնդում պասսատները փչում են հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք:

16

«Գետ – հորդացման սեզոն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Յանգզի – գարուն
- 2) Նիգեր – ձմեռ
- 3) Տիգրիս – ձմեռ
- 4) Օրինկոն – ամառ

17

«Աշխարհամաս – կղզի» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Անտարկտիկա – Թասմանիա
- 2) Ասիա – Կրետե
- 3) Աֆրիկա – Հրո երկիր
- 4) Եվրոպա – Իսլանդիա

18


«Գետ – օվկիանոս» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Դոն – Հյուսիսային սառուցյալ
- 2) Կոլորադո – Խաղաղ
- 3) Շարի – Հնդկական
- 4) Մեկոնգ – Հնդկական

19

Քարտեզում Ա տառով n°-ը նշված է:

- 1) Ֆիլիպինյան
- 2) Սուլավեսի
- 3) Հարավչինական
- 4) Արևելաչինական



20

Քարտեզում Ը տառով n°-ը մայրաքաղաքն է նշված:

- 1) Տաշքենդ
- 2) Աշխաբադ
- 3) Աստանա
- 4) Բիշքեք

21

Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Գետի ծախսը հունի լայնակի կտրվածքով մեկ վայրկյանում անցած ջրի քանակն է:
- 2) Մորենային թմբերը գետի քայքայիչ աշխատանքի արդյունքում առաջացած մակերևույթի ձևերն են:
- 3) Հարթավայրերում մակերևույթի բնույթից կախված՝ շատ հստակ է արտահայտվում գետերի ջրբաժան գիծը:
- 4) Ի տարբերություն հարթավայրային գետերի՝ լեռնային գետերն ունեն փոքր թեքություն:

22

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հարավային Ամերիկայի հարավարևելյան ափերի մոտով անցնում է Ֆոլկլենդյան սառը հոսանքը:
- 2) Հարավային Ամերիկայի արևելյան ափերի մոտով անցնում է Բրազիլական տաք հոսանքը:
- 3) Հարավային Ամերիկայի արևմտյան ափերի մոտով անցնում է Պերուական սառը հոսանքը:
- 4) Հարավային Ամերիկայի հյուսիսային ափերի մոտով անցնում է Գվինեական տաք հոսանքը:

23

Յ-րդ ժամային գոտին ընկած է.

- 1) արլ. ե. $22^{\circ} 30'$ -ի և արլ. ե. $37^{\circ} 30'$ -ի միջև
- 2) արլ. ե. $37^{\circ} 30'$ -ի և արլ. ե. $52^{\circ} 30'$ -ի միջև
- 3) արմ. ե. $22^{\circ} 30'$ -ի և արմ. ե. $37^{\circ} 30'$ -ի միջև
- 4) արլ. ե. $7^{\circ} 30'$ -ի և արլ. ե. $22^{\circ} 30'$ -ի միջև

24


Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երկրների մեծ մասի բնակչության կազմում գերակշռում են կանայք:
- 2) Բարձր է բնակչության բնական աճը:
- 3) Տարածաշրջանի մեջ են մտնում Արաբական և Հինդուստան թերակղզիները:
- 4) Այստեղ են առաջացել քրիստոնեություն և բուդդայականություն կրոնները:

25

Մեռատարիքային բուրգը բնորոշ է.

- 1) Ավստրալիային
- 2) Ռուսաստանին
- 3) Մեծ Բրիտանիային
- 4) Թուրքիային



26

Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներում բարձր բնական աճը պայմանավորված չէ.

- 1) կրթական բարձր մակարդակով
- 2) կանանց տնտեսության մեջ ներգրավվածության ցածր աստիճանով
- 3) վաղ ամուսնություններով
- 4) գյուղական բնակչության գերակշռությամբ

27

Հասարակության զարգացման մեջ քաղաքների դերի մեծացման պատմական գործընթացը, որն արտահայտվում է բնակչության ընդհանուր թվում քաղաքային բնակչության տեսակարար կշռի ավելացմամբ և քաղաքային ապրելակերպի տարածմամբ, կոչվում է.

- 1) ագլոմերացիա
- 2) դեպոպուլյացիա
- 3) ուրբանիզացիա
- 4) միգրացիա

28

Բնութագրումով որոշել պետությունը.

Հարավարևմտյան Ասիա տարածաշրջանի այս երկրի տնտեսության մասնագիտացման ճյուղերից է նավթի արդյունահանումը և փյունիկյան արմավի մշակումը: Երկիրն արևմուտքից սահմանակցում է Մաուրիտանիային, իսկ արևելքից՝ Իրանին: Ո՞րն է այդ երկիրը.

- 1) Լիբանանը
- 2) Օմանը
- 3) Իրաքը
- 4) Սիրիան

29

Որքա՞ն կկազմի երկրի բնակչության բացարձակ բնական աճը, եթե բնակչության թիվը 2780000 է, ծնելիությունը կազմում է 12 ‰, մահացությունը՝ 7 ‰.

- 1) 19460
- 2) 13900
- 3) 33360
- 4) 52820

30 **Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Ունի բնակչության բարձր բնական աճ:
- 2) Ըստ պետական կարգի՝ բացարձակ միապետություն է:
- 3) Պարսիկներից հետո երկրի խոշոր ազգություններից են ադրբեջանցիներն ու քրդերը:
- 4) Թեհրանը, Սպահանը երկրի հայաշատ քաղաքներից են:

31 **Դաշնային պետական կառուցվածք ունեն.**

- 1) Հնդկաստանը, Իրանը
- 2) Ռուսաստանը, Թուրքիան
- 3) Կանադան, Գերմանիան
- 4) Ֆրանսիան, ԱՄՆ-ը

32 **«Արտադրանք – արդյունաբերության ճյուղ» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) տրիկոտաժ – թեթև արդյունաբերություն
- 2) սինթետիկ մանրաթել – թեթև արդյունաբերություն
- 3) հաստոց – մետաղաձուլություն
- 4) պլաստմասսա – մեքենաշինություն

33 **«Ժողովրդագրական պայթյունը» բնորոշ է.**

- 1) Ֆրանսիային և Գերմանիային
- 2) ԱՄՆ-ին և Կանադային
- 3) Նիգերիային և Ռուանդային
- 4) Ռուսաստանին և Ուկրաինային

34 **«Նավահանգիստ – երկիր» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Օդեսա – Ռուսաստան
- 2) Փոթի – Ադրբեջան
- 3) Մարսել – Իսպանիա
- 4) Մումբայ – Հնդկաստան

35

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Միջերկրածովյան երկրները մասնագիտանում են ձիթապտղի մշակությամբ:
- 2) Վուշը հիմնական թելատու մշակաբույսն է և տարածված է արևադարձային գոտու երկրներում:
- 3) Շաքարի ճակնդեղի մշակության հիմնական շրջանները բարեխառն գոտում են:
- 4) Շաքարեղեգը ջերմասեր բույս է և հիմնականում տարածված է ջերմային տաք գոտում:

36

Չինաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Արևելյան շրջաններում գետերը քիչ են և սակավաջուր:
- 2) Առաջատար է բամբակյա և մետաքայա գործվածքների արտադրությամբ:
- 3) Կենտրոնական և արևմտյան մասերի կլիման խոնավ մերձարևադարձային–մուսսոնային է:
- 4) Հարուստ է արժեքավոր անտառներով:

37

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Թեթև արդյունաբերությունը բացասական մեծ ներգործություն ունի շրջակա միջավայրի վրա:
- 2) Համաշխարհային թեթև արդյունաբերության մեջ բավականին մեծ է զարգացող երկրների մասնաբաժինը:
- 3) Թեթև արդյունաբերությունը սերտորեն կապված է գյուղատնտեսության հետ:
- 4) Թեթև արդյունաբերությունն աչքի է ընկնում աշխատատարությամբ:

38

«Մշակաբույս – առաջատար երկիր» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) կակաո – Գանա
- 2) թեյ – Նորվեգիա
- 3) սուրճ – Ֆրանսիա
- 4) բամբակենի – Կանադա

39

«Սահմանակից երկրներ – լեռներ» գույգորդումներից ընտրել ճիշտը.

- 1) Չիլի – Արգենտինա – Անդեր
- 2) Լեհաստան – Սլովակիա – Պիրենեյներ
- 3) Իտալիա – Ֆրանսիա – Կարպատներ
- 4) Հնդկաստան – Չինաստան – Տյան Շան

40 Ո՞ր երկու երկրները Հարավարևմտյան Ասիայում չեն.

- 1) Սիրիան և Լիբանանը
- 2) Իսրայելը և Հորդանանը
- 3) Թուրքիան և Իրանը
- 4) Պակիստանը և Թուրքմենստանը

41 Բնութագրումով որոշել երկիրը.

Բնակչության թվաքանակով երկիրն աշխարհում առաջին տասնյակում է: Բազմազգ պետություն է: Բնակչությանը բնորոշ է նեղացված վերարտադրության ռեժիմը: Բնակչության խտությունն արևմուտքից արևելք շարժվելիս նվազում է: Ո՞րն է այդ երկիրը.

- 1) Ղազախստանը
- 2) Ուկրաինան
- 3) Պակիստանը
- 4) Ռուսաստանը

42 Թուրքիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Թուրքերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական լեզվախմբին:
- 2) Բնակչությունը բնութագրվում է բարձր բնական աճով:
- 3) Բնակչության թվով երկրորդ ազգը քրդերն են:
- 4) Բնակչության գերակշիռ մասը դավանում է մահմեդականության սուննի ուղղությունը:

43 Ո՞ր շարքում տրված լեռնագագաթներն ունեն հրաբխային ծագում.

- 1) Գոմշասար, Թեժլեռ, Սուկավետ
- 2) Առնոս, Ուրծ, Մեծ Քիրս
- 3) Մարութա, Ջիլո, Կապուտջուղ
- 4) Սիփան, Ծղուկ, Սրմանց

44 «Լեռնագագաթ – բարձրություն» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Արագած – 4900 մ
- 2) Թեժ լեռ – 3895 մ
- 3) Կապուտջուղ – 3550 մ
- 4) Աժդահակ – 3597 մ

45

Ընտրել միջլեռնային գոգավորությունների անվանումների և դրանց բնութագրերի համապատասխանությունների ճիշտ շարքը.

- | | |
|------------------|--|
| ա. Բասենի դաշտ | 1. Այդտեղ են միախառնվում Արևմտյան և Արևելյան Եփրատ գետերը: |
| բ. Երզնկայի դաշտ | 2. Տարածվում է Արևմտյան Եփրատի ակունքներում՝ 1800–2000 մ բարձրության վրա, հատակը հարթ է, տեղ–տեղ՝ ճահճոտ: |
| գ. Կարնո դաշտ | 3. Տարածվում է Արաքսի վերին հոսանքի ավազանում և ծածկված է բերրի սևահողերով: |
| դ. Խարբերդի դաշտ | 4. Տարածվում է Արևմտյան Եփրատի միջին հոսանքի ավազանում՝ 1200–1400 մ բարձրության վրա և ունի բարձր սեյսմիկություն: |

- 1) ա–1, բ–4, գ–2, դ–3
- 2) ա–3, բ–4, գ–2, դ–1
- 3) ա–1, բ–3, գ–2, դ–4
- 4) ա–3, բ–4, գ–1, դ–2

46

ՀՀ–ի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Գոյություն ունի արոտավայրերի գերբեռնվածություն և գերարածեցում:
- 2) Տավարաբուծությունը մյուս ճյուղերի համեմատ ավելի համաչափ է տեղաբաշխված:
- 3) Բնորոշ է արոտային անասնապահության զարգացման վերընթաց գոտիական համակարգը:
- 4) Անասնապահության ճյուղային կառուցվածքը ձևավորվել է միայն բնակչության պահանջմունքների և տնտեսական պայմանների ազդեցությամբ:

47

ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
- 2) Ալյումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
- 3) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
- 4) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:

48

Հրազդան և Արարատ քաղաքների օդային ավազանի աղտոտման պատճառներից է.

- 1) քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների արտանետումները
- 2) գունավոր մետաղաձուլական ձեռնարկությունների արտանետումները
- 3) մեքենաշինական ձեռնարկությունների առկայությունը
- 4) շինանյութերի արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումները

49


Լոռու մարզի ո՞ր քաղաքը երկաթուղային կայարան չէ.

- 1) Ալավերդի
- 2) Թումանյան
- 3) Սպիտակ
- 4) Ստեփանավան

50

Ի՞նչն ընդհանուր չէ Տավուշի և Վայոց ձորի մարզերի համար.

- 1) Մասնագիտացած են հանքային ջրերի արտադրության մեջ:
- 2) Հարուստ են անտառային ռեսուրսներով:
- 3) Գերիշխում են ծալքաբեկորավոր լեռնաշղթաներն ու միջլեռնային գոգավորությունները:
- 4) Բնակչության մեծ մասն ապրում է գյուղերում:



51 Ո՞ր գետն է քարտեզում նշված Դ տառով.

- 1) Գավառագետ
- 2) Գետիկ
- 3) Արգիճի
- 4) Մասրիկ

52 Ո՞ր էլեկտրակայանն է քարտեզում նշված Ջ տառով.

- 1) Երևանի
- 2) Արզնու
- 3) Արգելի
- 4) Քանաքեռի

53 Նավթի պաշարներով հարուստ պետություն է.

- 1) Նորվեգիան
- 2) Իսլանդիան
- 3) Շվեդիան
- 4) Գերմանիան

54 Թթվային անձրևների առաջացման պատճառ է(են).

- 1) Հյուսիսային Ամերիկայում պեստիցիդների չարաշահումը
- 2) միջերկրածովյան շրջաններում զբոսաշրջության զարգացումը
- 3) մետաղաձուլական ձեռնարկություններից ծծմբային միացությունների արտանետումները
- 4) մթնոլորտում ածխաթթու գազի առկայությունը

55 Բնական միջավայրի այնպիսի փոփոխությունը, որը հանգեցնում է երկրահամակարգի էկոլոգիական հավասարակշռության խախտմանը և կենդանի օրգանիզմների, այդ թվում՝ մարդկանց գոյության պայմանների վատթարացմանը, կոչվում է.

- 1) ջերմոցային էֆեկտ
- 2) բնօգտագործում
- 3) սահմանային թույլատրելի խտություն
- 4) աղտոտում

56

Գրել այն լեզվախմբերի համարները, որոնք չեն մտնում հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ.

- | | |
|---------------|----------------|
| 1. գերմանական | 5. հնդարիական |
| 2. թյուրքական | 6. քարթվելական |
| 3. ռոմանական | 7. հայկական |
| 4. սլավոնական | 8. իրանական |

57

Գրել միագործառության քաղաքների համարները.

- | | |
|-------------|--------------|
| 1. Ծաղկաձոր | 5. Նոր Հաճրն |
| 2. Քաջարան | 6. Մեծամոր |
| 3. Հրազդան | 7. Արմավիր |
| 4. Կապան | 8. Իջևան |

58

Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Խաղաղ օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|----------------------------|----------------------|
| 1. Ասեդի հրվանդանի | 5. Այասկայի |
| 2. Հյուսիսխաղաղօվկիանոսյան | 6. Գվինեական |
| 3. Գվինական | 7. Գոլֆստրիմ |
| 4. Կուրո Սիո | 8. Արևելաավստրալական |

59

Գրել Անտարկտիդայի ափերը ողողող ծովերի համարները.

- | | |
|-------------------|---------------|
| 1. Բարենցի | 5. Ուեդդելի |
| 2. Թասմանի | 6. Ամունդսենի |
| 3. Չոկոտյան | 7. Լապտևների |
| 4. Բելինսհաուզենի | 8. Ռոսսի |

60

Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել տեկտոնահրաբխային և խառնարանային ծագում ունեցող լճերի համարները.

- | | |
|------------|-------------|
| 1. Սևանա | 5. Նեմրութի |
| 2. Օնտարիո | 6. Արմադանի |
| 3. Վանա | 7. Բայկալ |
| 4. Օնեգա | 8. Ռուդոլֆ |

61 Գրել այն լճերի համարները, որոնք Ասիայում են.

- | | |
|-----------|--------------|
| 1. Ուրմիա | 5. Սևանա |
| 2. Մեռյալ | 6. Աթաբասկա |
| 3. Պոռպո | 7. Իսիկ Կուլ |
| 4. Թանա | 8. Օնեգա |

62 ՀՀ տրված գետերի համարները դասավորել ըստ այն քաղաքների, որոնցով հոսում են այդ գետերը. Ապարան, Վայք, Վանաձոր.

1. Փամբակ
2. Քասաղ
3. Արփա

63 Հարավային Եվրոպայի տրված պետությունները դասավորել սահմանակից երկրների թվաքանակի աճման կարգով.

1. Պորտուգալիա
2. Անդորրա
3. Իսպանիա
4. Իտալիա

64 Նավթի համաշխարհային հետախուզված պաշարները կազմում են 133 մլրդ տ: Երկրագնդի բնակչության թիվը 7 մլրդ մարդ է: Որքա՞ն է երկրագնդի բնակչության մեկ շնչի հաշվով ռեսուրսապահովվածությունը նավթով:

(65-66) ՀՀ բնակչությունը 3,2 մլն է, մահացության ցուցանիշը՝ 0,6 %, բնական աճը՝ 0,3 %.

65 Որոշել ՀՀ բնակչության տարեկան բացարձակ մահացությունը:

66 Որոշել ՀՀ բնակչության տարեկան բացարձակ բնական աճը:

(67-68) Գետի լայնությունը 8 մ է, միջին խորությունը՝ 50 սմ, ջրի արագությունը՝ 1,5 մ/վ.

67 Որոշել գետի ծախսը:

68 Որոշել գետի հոսքը 1 ժամում:

69

ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

1. Կարտոֆիլ աճեցվում է բոլոր բնական գոտիների ցանքատարածություններում:
2. Բուսաբուծության մասնագիտացման ճյուղերն են խաղողագործությունը և պտղաբուծությունը:
3. Անասնապահության արտադրանքի բաժինը զգալիորեն գերակշռում է բուսաբուծության նկատմամբ:
4. Հացահատիկի և կարտոֆիլի մշակությունն ունի տեղական նշանակություն:
5. Գյուղատնտեսական նշանակության հողերից ամենամեծ մակերեսը զբաղեցնում են վարելահողերը:
6. Հողաբարելավման գլխավոր տեսակը քիմիական մեղիորացումն է:

70

Աշխարհի տրանսպորտի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

1. Առևտրային նավատորմով աշխարհի առաջատար երկրներն են Լիբերիան, Պանաման, Ճապոնիան և Հունաստանը:
2. Ծովային փոխադրումների հիմնական բեռներն են նավթն ու նավթամթերքը, հանքաքարի տարբեր տեսակները, հացահատիկը և անտառանյութը:
3. Բեռնաշրջանառությունը որոշակի ժամանակահատվածում տեղափոխած բեռների քանակի և փոխադրումների միջին հեռավորության հարաբերությունն է:
4. Տրանսպորտի մի քանի տեսակների հաղորդակցության ուղիների ճյուղավորման վայրը կոչվում է տրանսպորտային համակարգ:
5. Տրանսպորտային ցանցի կոնֆիգուրացիան կախված է տարածքի մեծությունից և ուրվագծից, բնական պայմաններից, տնտեսության և բնակչության տեղաբաշխման բնույթից:
6. Համաշխարհային ուղևորափոխադրումների ոլորտում բացարձակ առաջատարը ավտոմոբիլային, իսկ բեռնաշրջանառության ոլորտում՝ ծովային տրանսպորտն է: